11878

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«17» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 245-25

Նախաձեռնող՝ Սամսոն Գրիգորյան
ք. Երևան, Դավիթ Բեկի 106/9

Գործունեությունը՝ Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ.Հովսեփյան փողոցի 38/8 հասցեում նախատեսվող բնակելի շենքի կառուցում
ք. Երևան

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 245 - 25

« 17 » 10 2025թ.

Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ.Հովսեփյան փողոցի 38/8 հասցեում նախատեսվող բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Սամսոն Գրիգորյան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ, /«Բ» կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Երևան քաղաք, Նորք-Մարաշ վարչական շրջան

Ներածական մաս. Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը նախատեսվում է իրականացնել Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ.Հովսեփյան փողոցի 38/8 հասցեում: Նախատեսվող գործունեության տարածքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա) ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Կառուղվող բնակելի շենքը գտնվում է Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փողոցի 38/8 հասցեում: Ընդհանուր հողատարածքի մակերեսը կազմում է 4282 քմ: ±0.000 նիշում կառուցապատման տարածքը կազմում է 1631 քմ, իսկ կանաչապատման մակերեսը՝ 1755 քմ, մնացած մակերեսը օգտագործվելու է որպես ճանապարհներ և մայթեր: Նախատեսվող շինությունը բաղկացած է ստորգետնյա ավտոկայանատեղիից՝ նախատեսված 69 մեքենայի համար և վերգետնյա 6 հարկերից: Քանի որ հողակտորն ունի ռելիեֆային առանձնահատկություններ՝ շինությունը Գ. Հովսեփյան փողոցի կողմից դիտվում է որպես 5 հարկ, իսկ բակային հատվածից՝ 6 հարկ: Ռելիեֆի թելադրանքից ելնելով՝ փողոցի և բակի կողմից շինությունը նախատեսվում է ապահովել գլխավոր մուտքերով: ±0.000 նիշում կառույցը նախատեսվում է օգտագործել որպես՝ բնակելի մուտքերի ընդունարաններ, իսկ մնացած մակերեսը՝ հասարակական նշանակության (օրինակ՝ խանութներ, սպորտային զոնա, օֆիսային տարածքներ և այլն): Երկրորդ հարկից մինչև վեցերորդ հարկերը նախատեսվում են թվով 49-ը բնակարաններ:

Կառույցը նախատեսվում է բաժանել սեյսմիկ կարով՝ հաշվի առնելով կոնստրուկտորական նորմերը և տարածաշրջանի սեյսմիկ նորմերը: Կառույցը ավտոմատ կերպով բաժանվում է երկու մուտքերի ամեն մեկն իր առանձին աստիճանավանդակով և վերելակով: Ավտոկայանատեղին արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է օգտագործել որպես ապաստարան: Ավտոկայանատեղիում նախատեսված են սանհանգույցներ նաև հաշմանդամների համար: Կայանատեղին կահավորված է լինելու ծխահեռացման և մաքուր օդի ներածման համակարգերով:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասերի մակերեսը՝ 4288 քմ,
- համալիրի կառուցապատման մակերեսը՝ 1631 քմ /38 %/,
- կանաչապատման մակերեսը՝ 1755 քմ /41 %/,
- անջրանցիկ մակերեսը /հետիոտն և ավտոմոբիլային ուղիներ/՝ 902 քմ /21 %/,
- ստորգետնյա հարկի մակերեսը՝ 3500 քմ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը նախատեսվում է իրականացել համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտկվեն ծառեր և թփեր:

Համաձայն հաշվետվության տեղեկատվության՝ հայցվող տարածքում և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Հայցվող տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքն անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել Գ.Հովսեփյան փողոցից կամ Նորք Մարաշի ջրամբարի հարակից տարածքից, կոյուղին՝ հնարավոր կլինի միացնել տարածքից ուղիղ գծով մոտ 460 մ հեռավորությամբ d=400 մմ կոյուղատարին, հեղեղատարը՝ տարածքից ուղիղ գծով մոտ 460 մ հեռավորությամբ d=400 մմ հեղեղատարին: Շինարարության փուլում ջրցանման համար ջուրը նախատեսվում է ձեռք բերել պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարման տեխնիկական պայման ստանալու համար փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է մատակարար կազմակերպություն: Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու են մոտ 22000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ: Հանվող 18500 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը կօգտագործվի որպես հետլիցք:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում նախատեսվում է պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը նախատեսվում է տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական աղբը տեղափոխվելու է դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,
- հողման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը, կանաչապատ տարածքների ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային,
- նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 200 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

- **Պատճառաբանական մաս.** Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային լսումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, Երևանի քաղաքապետարանից ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները ուղարկվել է կառուցապատողին լրամշակման, սակայն լրամշակված ՇՄԱԳ հաշվետվությունում մասամբ են հաշվի առնվել, մասնավորապես՝

- «2.8 Թափոնների կառավարում» ենթաբաժնում չի վերանայվել առաջացող թափոնների անվանումները և ծածկագրերը, և չի նույնականացվել ՀՀ բնապահպանության նախարարի

2006 թվականի N 342–Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկի անվանումները ու ծածկագրերը,

Աշխատանքային նախագծում և ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված կանաչապատման ցուցանիշները չեն համապատասխանում, մասնավորապես՝ նախագծով կանաչապատ տարածքի մակերեսը կազմում է 1300 մ² (30%), ինչը չի համապատասխանում նախագծման թույլտվությամբ սահմանված պահանջին (40 % և ավելի), ինչի վերաբերյալ ներկայացվել է նաև Երևանի քաղաքապետարանի կարծիքում: Նշվածի վերաբերյալ ՇՄԱԳ հաշվետվության լրամշակման գրությամբ ներկայացվել է կառուցապատողին, սակայն լրամշակված փաթեթում կանաչապատման մակերեսի փոփոխությունը /կանաչապատման մակերեսը 1300 քմ-ից դարձել է 1755 քմ /41 %/ չի արտացոլվել նախագծի ճարտարապետական մասում /գլխավոր հատակագծում/:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 17-րդ հոդվածի 14-րդ մասի 1-ին կետը և 19-րդ հոդվածի 4-րդ մասը՝ քաղաքացի Սամսոն Գրիգորյանի կողմից փորձաքննության ներկայացված Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ.Հովսեփյան փողոցի 38/8 հասցեում նախատեսվող բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան